Փորձագիտական հարթակային քննարկում քաղաքական ոլորտում առկա ատելության խոսքի ու ատելության քարոզի թեմայով[1]

29 մայիսի 2019թ.

Հանդիպմանը մասնակցում էին երկու քաղաքական գործիչ ընդդիմադիր քաղաքական ուժերից և երեք փորձագետ:

Հանդիպման սկզբում մասնակիցները քննարկեցին միջազգային փորձը և պատմական էքսկուրս կատարեցին հեղափոխությունների անցյալին: Փորձագետներից մեկը նշեց, որ ատելության խոսքի տարածումը հեղափոխություններից առաջ և հետո սովորական երևույթ է: Ավելին, ատելության խոսքը հեղափոխության նախադրյալների և պատճառների առկայության հետևանք է, և միաժամանակ՝ հեղափոխության իրագործումը խթանող, այն արագացնող գործոն: Մինչդեռ հեղափոխությունից հետո ատելության խոսքը, դրա ծավալները արդեն հեղափոխաության հետևանք են: Այսպես, օրինակ, իշխանությունների կողմից իրականացվող ապօրինի գործողությունները, կոռուպցիան, ժողովրդի լայն զանգվածների հարստահարումը, արդարադատության հանդեպ իրագործված հանցագործությունները բերում են ժողովրդական լայն զանգվածների դժգոհության, որի առավել արմատական տրամադրված մասը ակտիվորեն ատելության խոսք է տարածում իշխանությունների հանդեպ: Մեդիաների և հատկապես սոցիալական ցանցերի տարածվածությունը բերել է հայաստանում այդ ատելության խոսքի առավել մեծ տիրաժավորմանը:

Հայաստանում մինչև հեղափոխությունը իշխանությունների հանդեպ ատելության խոսքի տարածումը հիմնական քաղաքական տրենդն էր: Ընդ որում, ձևավորվել էր ավանդույթ, համաձայն որի անգամ իշխանությունների վերահսկողության ներքո գտնվող կեղծ ընդդիմադիր լրատվամիջոցները տարածում էին ատելության խոսք իշխանության այս կամ այն թևի կամ անհատի հանդեպ: Մի կողմից դա արվում էր՝ լայն հանրության առջև իրենց ընդդիմադիր լինելը հավաստելու և տպաքանակ/դիտումներ ապահովելու նպատակով, մյուս կողմից էլ ընդդիմադիր դիրքերից իշխանության ներքին հակամարտություններում իշխանության որևէ թևի կողմը բռնելու և հակառակորդին հարվածելու շահադիտական նկատառումներով: Այսպիսով, իշխանությունը ո՛չ ի վիճակի էր և ո՛չ էլ մեծ հաշվով շահագրգռված ատելության խոսքի տարածման դեմ պայքարով: Առավելագույնը՝ թիրախում հայտնված պաշտոնյան կամ օլիգարխը «գլխագին» էր վճարում որոշ ՁԼՄ-ների՝ իր մասին բացասական նյութեր հրապարակելը դադարեցնելու նպատակով: Իշխանությունները գտնվում էին կեղծ համոզմունքի ազդեցության ներքո, համաձայն որի՝ եթե հասարակությունը, ժողովուրդը որևէ էական դերակատարություն չունի իշխանության ձևավորման հարցում և նախընտրական և ընտրական գործընթացները գրեթե ամբողջությամբ կառավարվում են, ապա և

[1] Այս ֆոկուս խմբի մասնակից քաղաքական գործիչները չցանկացան լուսանկարահանվել՝ սեփական ինքնությունը որևէ կերպ չբացահայտելու նպատակով:

հասարակական կարծիքը չի կարող էական նշանակություն ունենալ քաղաքական գործընթացների վրա:

2018թ.-ին տեղի ունեցած Թավշյա հեղափոխությունը ցույց տվեց, որ դա այդպես չէ, և որ իշխանությունների հանդեպ կուտակված դժգոհությունը, որը նաև ուժեղացել էր ատելության խոսքի շնորհիվ, առաջին իսկ հնարավորության դեպքում հարյուր հազարավոր քաղաքացիների համար պայքարի դուրս գալու և իշխանությունների՝ երկիրը կառավարելու հնարավորությունները կաթվածահար անելու համար:

Այժմ, արդեն նախկին իշխանությոյիյերի այն օն-լայն հարթակներում, որտեղ մեկնաբանություններ թողնելու հնարավորությլոններ կան:

Քննարկմանը մասնակցող ընդդիմադիր քաղաքական գործիչներից մեկը իր անհամաձայնությունը հայտնեց փորձագետների նշած որոշ դրույթների հետ: Մասնավորապես, նա կարծիք հայտմեց, որ իրականում թե՛ այն ինչը որ տեղի է ունենում հիմա և թե՛ այն, ինչը տեղի էր ունենում հեղափոխությունից առաջ ոչ այնքան ատելության խոսք էր, որքան ատելության պլանավորված և լավ կազմակերպված քարոզ, որի պատվիրատուները գտնվում են Հայաստանից դուրս՝ արևմուտքում և որի տրանսլյատորները, իրականացնողները Հայաստանում այսպես կոչված քաղաքացիական հասարակության կազմակերպությլոնների ներկայացուցիչներն: Վերջինները, ինչպես նա արտահայտվեց, Սորոսի և մյուս արևմտյան դոնորների կողմից ֆինանսավորվող «գրանտակերներ» են, որոնց նպատակը Հայաստանում իշխանափոխություն իրականացնելն էր և «ազգային շահեր հետապնդող», «ավանդական արժեքների պահապան» և «Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերություններ պահպանել ձգտող» իշխանություններին հեռացնելը:

Ըստ մյուս քաղաքական գործչի, այժմ իշխանություններն իրենք հանդիսանում են ընդդիմադիր քաղաքական գործիչների հանդեպ ատելության քարոզի կազմակերպիչները սոցիալական ցանցերում՝ հավաքագրված ֆեյքերի միջոցով: Իրենց հանդեպ համացանցում առկա ատելության խոսքը նա համեմատեց Հոլոքոստի հետ:

Փորձագետներից մեկը նշեց, որ ընդդիմադիր քաղաքական ուժերը ևս լայնորեն կիրառում են վճարովի ֆեյքերի ինստիտուտը իշխանությունների և տարբեր փոքրամասնությունների հանդեպ ապատեղեկատվություն տարածելու, նրանց հանդեպ հասարակական դժգոհություն, անգամ՝ ատելություն սերմանելու նպատակով, որին ընդդիմադիր քաղաքական գործիչը հակադարձեց, որ տեղյակ չէ նման բաներից, սակայն կարծիք հայտնեց, որ դա ավելի շատ ինքնաբուխ, ինքնապաշտպանական գործունեություն է անհատ քաղաքացիների կողմից, որոնք ընդդիմաության կողմից հատուկ չեն ուղղորդվում:

Փորձագետը պնդեց, որ «ֆեյքերի պատերազմները» դադարեցնելու միակ ուղին նախ սեփական մեղսակցությունը և ներգրավվածությունը այդ գործընթացներում

ընդունելն է, ապաև փոխադարձ՝ երկուստեք համաձայնության գալը իշխանությունների հետ այդ դադարեցնելու: Ընդդիմադիր գործիչը պատասխանեց, որ անձամբ ինքը դրական է վերաբերում այդ հնարավորությանը, սակայն կասկած հայտնեց, որ եթե անգամ մյուս ընդդիմադիրները պատասխանատվության բաժին ունեն ֆեյքերի գործունեության համար՝ կհամաձայնեն դա դադարեցնել, քանի որ, ըստ նրա, իշխանությունները տանուլ են տալիս տեղեկատվական այդ պատերազմում և վերջիններին ավելի շահավետ է այն դադարեցնելը:

Մյուս փորձագետը արձանագրեց, որ ընդդիմադիր քաղաքական ուժերից ոմանք ուղղակի զբաղված են ատելության քարոզով ոչ միայն իշխանությունների դեմ, այլ վերջիններիս հետ կապելով և նրանց վարկաբեկելու միտմամբ՝ նաև սեռական փոքրամասնությունների դեմ: Մինչդեռ հենց ՀՀԿ-ի օրոք, երբ իշխանության մաս էր կազմում նաև ՀՅԴ-ն, ստորագրվել է ստամբուլյան կոնվենցիան, իսկ մինչ այդ էլ իշխանությունները անձնագրեր էին տալիս տրանսգենդեր անձանց, օրինակ, կնոջ անունով, սակայն տղամարդ սեռով, որի մասին նշել է վարչապետը:

Ընդդիմադիր քաղաքական գործիչը ասեց, որ իրենք թեև ստորագրել են Ստամբուլյան կոնվենցիան, սակայն չեն պատրաստվել այն վավերացնել: «Այսինքն խաբելու էիք եվրոպացի գործընկերներին», - փորձագետի հարցադրմանը քաղաքական գործիչը խուսափեց հստակ պատասխան տալուց:

Սույն փորձագիտական հարթակի աշխատանքները կազմակերպվել են, իսկ արձանագրությունը՝ կազմվել Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Ազատ քաղաքացի» ՔՆԱԿ ՀԿ հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հանուն Հայաստանի երիտասարդության շրջանում արմատականացման, այլատյացության և ատելության քարոզի հաղթահարման» ծրագրի շրջանակներում:
Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Ազատ քաղաքացի» ՔՆԱԿ ՀԿ հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպականմիության տեսակետները: